

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն

ԾՐԱԳԻՐ

**Ապացուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական
դատավարությունում դասընթացի
(բակալավրիատ 3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ)**

Կազմեց՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Դ.Մելքոնյանը

ԵՐԵՎԱՆ 2020

1902/F07 Ապացուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում (2 կրեդիտ), շաբաթական 2 ժամ (30 ժամ դասախոսություն), 2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց.

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակը ՀՀ քրեական դատավարությունում ապացուցողական իրավունքի, դրա առանձին ինստիտուտների, դրանց տեսական և մեթոդաբանական հիմքերի և ապացուցման գործընթացին վերաբերող տեսական և գործնական գիտելիքների հաղորդումն է:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.

✓ *(գիտելիք և իմացություն)*

- ներկայացնել վերաբերելի օրենսդրությունը, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքը,

- ներկայացնել ապացուցողական իրավունքի տեսական և մեթոդաբանական հիմքերը, օրենսդրության հիմքում ընկած հայեցակարգը, դրա հիման վրա կառուցված նորմերը և դրանց կիրառման պրակտիկայի դրսևորման օրինաչափությունները,

- ներկայացնել օրինականության պահանջներին համահունչ՝ ապացուցողական իրավունքի համապատասխան նորմերի ճիշտ կիրառման առանձնահատկությունները,

- առանձին իրավիճակներում ճիշտ մեկնաբանել և կիրառել ապացուցողական իրավունքին առնչվող իրավադրույթները՝ ապահովելով ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի կողմից նախանշված սկզբունքների պահպանումը:

(բուն մասնագիտական կարողություններ)

- ամբողջական պատկերացում կազմել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության հիմքում ընկած ապացուցողական իրավունքի տեսական և մեթոդաբանական հիմքերի, վերաբերելի մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումների վերաբերյալ,

- ամբողջական պատկերացում ունենալ ապացույցի հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների, ապացուցման էության, դրա առանձին տարրերի և նպատակի վերաբերյալ,

- բացահայտել ապացուցման նպատակի վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, ապացուցման հիմքում ընկած քրեադատավարական սկզբունքների կենսագործման օրենսդրական և նախադեպային չափանիշները,

- տիրապետել ապացուցման գործընթացի և մասնավորապես ապացույցների թույլատրելիության վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին,

- ամբողջական պատկերացում կազմել ապացույցների հավաքման գործընթացի վերաբերյալ՝ յուրաքանչյուր դեպքում ապահովելով ապացույցի առանձին տեսակների ձևավորման թույլատրելիությանը ներկայացվող պահանջները,

- հստակ տիրապետել ապացուման գործընթացում ներգրավված յուրաքանչյուր մասնակցի իրավունքների վերաբերյալ առկա կարգավորումներին, պատկերացում կազմել ապացուցման գործընթացում դատարանի դերի, դատավարության առանձին փուլերում ապացուցման առանձնահատկությունների, ապացույցների առանձին տեսակներին ներկայացվող պահանջների վերաբերյալ:

(ընդհանրական կարողություններ)

- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),

- վերլուծել փաստեր, դրանց նկատմամբ կիրառել օրենսդրական կարգավորումներ և դատական դիրքորոշումներ, կատարել հետևություններ, ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ
2. քննարկումներ, բանավեճեր
3. համացանցից օգտվելով անհատական հանձնարարությունների կատարում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր քննություն: Միավորների քայլը 5 է:

2-րդ ստուգում. Գրավոր քննություն: Միավորների քայլը 5 է:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Ապացուցումը՝ որպես քրեական դատավարության առանցքային ինստիտուտ

Քրեադատավարական ապացուցման հասկացությունը, նշանակությունը, բովանդակությունը և խնդիրները:

Ապացուցումը որպես ճանաչողական գործունեություն: Ապացուցման փիլիսոփայական և տրամաբանական հիմքը:

Ապացուցումը որպես դատավարական գործունեություն: Ապացուցման դատավարական ձևը:

Ապացուցման մեթոդոլոգիական հիմքը: Ճշմարտության բացահայտումը որպես ապացուցման նպատակ: Օբյեկտիվ և դատավարական ճշմարտություն: Ճշմարտության բացարձակ – հարաբերական բնույթը քրեական դատավարությունում:

Ապացուցումը՝ որպես քրեական դատավարությունում դատավարական ձևը կանխորոշող հիմնական գործոն:

Թեմա 1 – Ներկայացվում է դասախոսություն:

Թեմա 2. Ապացուցման հիմքում ընկած քրեադավարական սկզբունքների ընթեանուր բնութագիրը

Օրինականության սկզբունքի կենսագործումը ապացուցման գործընթացում:

Ապացուցումը՝ որպես գործի արդարացի քննության սկզբունքի կենսագործման դատավարական եղանակ:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի կենսագործումը ապացուցման գործընթացում:

Մրցակցությունը՝ որպես քրեական դատավարությունում ապացուցման գործընթացի կազմակերպման հիմքում ընկած հիմնարար սկզբունք:

Ապացույցների ազատ գնահատման սկզբունքը:

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և անձնական կյանքի անձեռնմխելիության սկզբունքների կենսագործումը ապացուցման գործընթացում:

Թեմա 2 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 3. Ապացուցման առարկան և սահմանները

Ապացուցման առարկայի հասկացությունը և նշանակությունը: Գլխավոր փաստը, միջանկյալ (ապացուցողական) փաստերը, օժանդակ փաստերը ապացուցման առարկայի կառուցվածքում, ապացուցման առարկան քրեական դատավարության տարբեր փուլերում:

Ապացուցման առարկայի կառուցվածքը: Ապացուցման ենթակա հանգամանքների բնութագիրը: Ապացուցման առարկայի և հանցակազմի հատկանիշների հարաբերակցությունը:

Ապացուցման առարկայի առանձնահատկությունները քրեական գործով վարույթի առանձին փուլերում և առանձին հանցագործությունների գործերով վարույթներով:

Ապացուցման սահմանների հասկացությունը և նշանակությունը: Ապացուցման առարկայի և սահմանների փոխհարաբերությունը:

Թեմա 3 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 4. Ապացուցման դատավարական բաղադրիչները

Ապացուցման գործընթացի քրեադատավարական հասկացությունը և բաղադրիչները (կառուցվածքը):

Ապացույցների հավաքման հասկացությունը և փուլերը:

Ապացույցների հավաքման եղանակների ընդհանուր բնութագիրը:

Քննչական գործողությունները որպես ապացույցների հավաքման հիմնական եղանակ: Քննչական գործողության կատարման նորմատիվային, դատավարական և փաստական հիմքերը:

Ապացույցների հավաքման մյուս եղանակները:

Ապացույցների ստուգման հասկացությունը: Ապացույցների ստուգման եղանակները:

Ապացույցների գնահատման հասկացությունը: Ներքին համոզմունքը որպես ապացույցների գնահատման եղանակ և արդյունք: Օրենքի և իրավագիտակցության դերը ապացույցների գնահատման գործում:

Թեմա 4 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 5. Ապացուցման սուբյեկտները

Ապացուցման սուբյեկտների հասկացությունը և դասակարգումը:

Քրեական հետապնդման մարմինների դերը ապացուցման գործընթացում:
Դատարանի դերը ապացուցման գործընթացում:

Մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցությունը ապացուցման գործընթացին:

Ապացուցման պարտականությունը: Ապացուցման բեռի բաշխումը դատավարության մասնակիցների միջև: Ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ միջազգային փաստաթղթերում առկա կարգավորումները: Ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ արդարադատության վերաբերյալ մարմինների իրավաբանությունը:

Տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և նրանց ներկայացուցիչների, դատավարության մյուս սուբյեկտների մասնակցությունը ապացուցմանը:

Թեմա 5 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 6. Ապացույցի հասկացությունը: Ապացույցների դասակարգումը

Ապացույցի հասկացությունը: Ապացույցների մասին պատկերացումների զարգացումը քրեադատավարական օրենսդրության և ապացույցների տեսության մեջ: Ապացույցների ձևի և բովանդակության միասնությունը:

Ապացույցների դասակարգման էությունը և նշանակությունը:

Անձնական ապացույցների հասկացությունը և տեսակները: Անձնական ապացույցների կապը իրեդենների հետ:

Ապացույցները սկզբնականի և ածանցյալի բաժանելու հիմքերը և նշանակությունը: Սկզբնական և ածանցյալ ապացույցների հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ապացույցների հասկացությունը: Անուղղակի ապացույցների միջոցով իրականացվող ապացուցման առանձնահատկությունները: Մեղադրող և արդարացնող ապացույցների հասկացությունը: Ապացույցները մեղադրողների և արդարացնողների բաժանման հիմքերն ու նշանակությունը:

Թեմա 6 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 7. Ապացույցների թույլատրելիության հասկացությունը և պայմանները

Ապացույցների թույլատրելիության հասկացությունը: Ապացույցների թույլատրելիության չափանիշները:

Ապացույցի անթույլատրելիության հանգեցնող քրեադատավարական օրենքի էական խախտման հասկացությունը:

Թունավորված ծառի պտուղների հայեցակարգը:

Ապացույցների սահմանափակ օգտագործման հասկացությունը և դրսևորումները:

Հարկադրաբար ձեռք բերված նմուշների՝ որպես ապացույց օգտագործման թույլատրելիությունը:

Հոգեկան խնդիրներ ունեցող անձանց ցուցմունքների թույլատրելիությունը:

«Ներքին դիտում» ՕՀՄ արդյունքում ստացված ապացույցների թույլատրությունը:

Մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործման իրավաչափության պայմանները:

Հանցագործության սադրանքի արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Միայն օպերատիվ տեղեկության հիման վրա բնակարանում կատարված խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգը:

Ապացույցների թույլատրելիության ասիմետրիա:

Թեմա 7 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 8. Ապացույցների վերաբերելիություն, արժանահավատություն և բավարարություն

Ապացույցների վերաբերելիության հասկացությունը և նշանակությունը: Ապացույցների վերաբերելիության չափանիշները:

Վերաբերելի ապացույցների շրջանակը: Ուղղակի և անուղղակի ապացույցների վերաբերելիության գնահատումը:

Ապացույցի արժանահավատության չափանիշները: Տեխնիկական միջոցներով ձեռք բերված ապացույցների արժանահավատությունը:

Ապացույցների բավարարությունը: Ապացույցների բավարարության գնահատման չափանիշները: Ապացույցների բավարարության առանձնահատկությունները քրեադատավարական առանձին որոշումներ կայացնելիս:

Թեմա 8 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 9. Կասկածյալի, մեղադրյալի, դատապարտյանի, մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները

Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունքների հասկացությունը և նշանակությունը: Մեղադրյալի ցուցմունքների երկակի իրավաբանական բնույթը: Մեղադրյալի ցուցմունքների առարկան, դասակարգումը և տեսակները:

Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունքների ստուգման և գնահատման առանձնահատկությունները:

Դատապարտյալի ցուցմունքների հասկացությունը և նշանակությունը: Դատապարտյալի ցուցմունքների առարկան:

Մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքների հասկացությունը և առարկան:

Թեմա 9 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 10. Վկայի և տուժողի ցուցմունքները

Վկաների ցուցմունքի հասկացությունը և նշանակությունը: Վկաների ցուցմունքների առարկան և բովանդակությունը:

Տուժողների ցուցմունքների հասկացությունը և նշանակությունը: Տուժողի ցուցմունքների առանձնահատկությունները և բովանդակությունը:

Վկաների և տուժողների ցուցմունքների ստուգման եղանակները: Վկաների և տուժողների ցուցմունքների գնահատման առանձնահատկությունները:

Թեմա 10 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 11. Փորձագետի եզրակացությունը

Փորձագետի եզրակացության հասկացությունը և նշանակությունը: Փորձագիտական հետազոտության օբյեկտները: Փորձագետի հատուկ գիտելիքների հասկացությունը:

Փորձագետի իրավասության սահմանները: Իրավական հարցերի լուծումը փորձագետի եզրակացության մեջ:

Փորձագետի եզրակացության տեսակները:

Հավանական եզրակացությունների ապացուցողական նշանակությունը:

Համալիր փորձաքննությունների առանձնահատկությունները:

Փորձագետի ցուցմունքի ապացուցողական նշանակությունը:

Թեմա 11 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 12. Իրեղեն ապացույցներ

Իրեղեն ապացույցի հասկացությունն ու նշանակությունը: Իրեղեն ապացույցների մեջ պարունակվող ինֆորմացիայի առանձնահատկությունները:

Իրեղեն ապացույցների տեսակները: Իրեղեն ապացույցների դասակարգումը: Համեմատական հետազոտման համար ստացված նմուշների ապացուցողական նշանակությունը:

Իրեղեն ապացույցների ստացման և ամրագրման եկանոնների պահպանումը որպես դրանց թույլատրելիության պարտադիր պայման: Իրեղեն ապացույցների ստուգումն ու գնահատումը:

Իրեղեն ապացույցների և այլ առարկաների պահպանումը:

Նախքան քրեական գործով վարույթի ավարտն իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները:

Քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների մասին ընդունվող որոշումները:

Թեմա 12 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Թեմա 13. Քննչական և դատական գործողությունների արձանագրությունները և այլ փաստաթղթերը

Քննչական և դատական գործողությունների հասկացությունը և նշանակությունը, դրանց թույլատրելիության պայմանները: Արձանագրությունների տեսակները:

Արձանագրությանը կցվող նյութերի ապացուցողական նշանակությունը:

Փաստաթղթերի՝ որպես ապացույցների ընդհանուր բնութագիրը: Փաստաթղթի հասկացությունը: Փաստաթղթի վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Փաստաթղթերի դասակարգումը և տեսակները: Փաստաթղթերի և իրեղեն ապացույցների սահմանազատումը:

Կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու, ձերբակալման, անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանման առիթով կազմված արձանագրությունների ապացուցողական նշանակությունը:

Թեմա 13 – Ներկայացվում է դասախոսություն: Ուսանողներին առաջարկվում է ուսումնասիրել և ներկայացնել դատական պրակտիկան:

Վերաբերելի մասնագիտական գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Մենագրություն, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք» հրատարակչություն, 2010:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք:
4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (նախագիծ):
5. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Եր., 2011
6. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Հատոր 2, Եր., 2013: <https://www.osce.org/hy/yerevan/116466?download=true>

7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. ընդհանուր մաս: ԵՊՀ հրատարակություն, 2006թ.:
8. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. ընդհանուր մաս: ԵՊՀ հրատարակություն:
9. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. հատուկ մաս: ԵՊՀ հրատարակություն:
10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու. –Եր.: ՀՀ իրավաբանների միություն, 2014.
11. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափանիշների կիրառումը ՀՀ քրեական դատավարությունում: Մենագրություն, ԵՊՀ հրատարակություն, Երևան, 2010թ.:
12. Ղամբարյան Ա. Ապացույցների թույլատրելիությունը քրեական գործի հարուցման փուլում.- Եր.: Հեղինակ. հրատ., 2003.
13. Ղամբարյան Ա. Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում, Երևան, 2004թ.:
14. Ա. Հարությունյան, Դ. Մելքոնյան: Կասկածյալի և մեղադրյալի իրավունքը լռելու իրավունքի եվրոպական չափանիշների լույսի ներքո //Պետություն և իրավունք թիվ 3(41), Երևան, 2008:
15. Դ. Մելքոնյան. Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները // Պետություն և իրավունք թիվ 4(42), Երևան, 2008:
16. Դ. Մելքոնյան. Դատական վարույթներում ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգն ու հետևանքները, //Դատական իշխանություն, 15-16/80-81, 2006:
17. Դ. Մելքոնյան. Դատական վարույթներում ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգն ու հետևանքները, //Դատական իշխանություն, 5-6/82-83, 2006:
18. Դ. Մելքոնյան. Դատական քննության փուլում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը, //Իրավագիտության հարցեր, թիվ 1-2, 2006:
19. Դ. Մելքոնյան. Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը, //Իրավագիտության հարցեր, թիվ 4, 2005:
20. Դ. Մելքոնյան. Ապացույցներ ձեռք բերելիս քրեադատավարական օրենքի էական խախտման հասկացությունը, //Իրավագիտության հարցեր, թիվ 1, 2005:
21. Դ. Մելքոնյան. Քրեական գործի հարուցման փուլում ապացույցների թույլատրելիության առանձնահատկությունները, //Պետություն և իրավունք, թիվ 2(28):
22. Դ. Մելքոնյան. Քննչական գործողության` որպես ապացույցների հավաքման հիմնական միջոցի կատարման ընդհանուր պայմանները, //Պետություն և իրավունք, թիվ 1-2(23-24):
23. Դ. Մելքոնյան. Պաշտպանության կողմի նոր դատավարական հնարավորությունները և դրանց հակակշիռները, //Պետություն և իրավունք, N 2 (64), Երևան, 2014, էջեր 62-67:
24. Ա. Ղամբարյան. Ապացուցման գործընթացում պաշտպանի կարգավիճակի կատաելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Հայրապետ, 2015:

Վերաբերելի դատական ակտերը (այդ թվում` ՄԻԵԴ վճիռները) տեղադրված են ԵՊՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի` դասընթացին վերաբերող էջում:

